ԱԿԱՆՋԴ ԲԵՐ՝ ԱՍԵՄ...

ՀՈՄԱՆԻՇ ԵՎ ՀԱԿԱՆԻՇ ԲԱՌԵՐ

5-րդ դասարանում սովորել եք, որ հաճախ են հանդիպում այնպիսի բառազույգեր կամ շարքեր, որոնք իրենց իմաստով հիմնականում համընկնում են:

Իմաստով մոտ կամ նույն, բայց ձևով տարբեր բառերը կոչվում են հոմանիշ բառեր:

Սովորաբար հոմանիշների շարքում բառերից մեկը լինում է հիմնական՝ հիմնաբառ, որն այդ շարքի ելակետային բառն է, օրինակ՝ մազ-հեր, վարս, ծամ, գես, գիսակ հոմանշային շարքի հիմնաբառը մազ-ն է: Հիմնաբառը ոճական տեսակետից սովորաբար լինում է չեզոք, իսկ շարքի մյուս բառերն ունենում են ոճական այլևայլ երանգներ: Հոմանիշները խոսքում երբեմն կարող են իրար փոխարինել, երբեմն՝ ոչ: Այդ պատճառով լինում են երկու տեսակ՝ նույնանիշներ և համանիշներ:

Երբեմն երկու կամ ավելի բառեր կարող են իրենց իմաստներով լիովին համընկնել:

Իմաստով նույն, բայց ձևով տարբեր բառերը կոչվում են նույնանիշ բառեր, օրինակ՝ լուսաբաց և այգաբաց բառերը նշանակում են «լույսը բացվելու ժամանակը»:

Իմաստով մոտ, բայց ձևով տարբեր բառերը կոչվում են համանիշ բառեր, օրինակ՝ ճանապարհ, ուղի, կածան, շավիղ բառերն իրար մոտ իմաստ ունեն: Բայց ճանապարհ-ը երթևեկության ուղին է, անցման տեղն ու անցումը, ուղի-ն՝ գետնի վրա երթևեկության համար բացված ճանապարհն է, տարածություն, որով տեղաշարժ է կատարվում, կածան-ը՝ ոտքի նեղ ճանապարն է, շավիղ-ը՝ նեղ արահետն է: Այս բառերը լիովին չեն նույնանում:

Համանիշներն իրարից տարբերվում են որևէ հատկանիշի արտահայտման չափով (օրինակ՝ քամի, հով, զեփյուռ, սյուք, խորշակ, հողմ, սամում, փոթորիկ) կամ երևույթի նկատմամբ վերաբերմուն-

քով (օրինակ՝ սիրել, պաշտել, երկրպագել, գորովել):

Հոմանիշ կարող են լինել նաև ածանցները. օրինակ՝ համեստորեն–համեստաբար, անգետ–տգետ, արծաթե–արծաթյա:

Բառակազմական հոմանիշներ կարող են ստացվել բաղադրիչների տարբեր դասավորության հետևանքով՝ մայրաքաղաք–քաղաքամայր, բերանբաց–բացբերան, շնագայլ–գայլաշուն:

Կան բառերի զույգեր, որոնք միմյանց հակադիր իմաստներ են արտահայտում, օրինակ՝ երկար–կարճ, պարզ–բարդ, բարի–չար:

Միմյանց հակառակ իմաստ ունեցող բառերը կոչվում են հականիշներ:

Հականիշների շարքը կազմված է լինում երկու անդամից՝ երկու բառից, որոնք միևնույն բնույթի հատկանիշի, երևույթի հակադիր որակումներ են: Հականիշ կարող են լինել այն բառերը, որոնք ունեն հատկանիշի իմաստ՝ որակի, չափի, տարածական, ժամանակային և այլն:

Հականիշները կարող են լինել նույնարմատ, օրինակ՝ գոհ–դժգոհ, բախտավոր–անբախտ, դժբախտ, նաև տարարմատ, օրինակ՝ բաց–փակ, տարաբախտ–երջանիկ:

Առաջադրանքներ

1. Ընդգծիր հոմանիշ բառերի մեկ եռյակ:

Բարձունք, բույր, կատար, խարտյաշ, աշխատասեր, գագաթ, գործունյա, գունագեղ, անթիվ, ջանասեր, բազմաթիվ, ոսկեգույն:

2. Ընդգծիր հոմանիշ բառերի երեք զույգ:

Աշխատասեր, կոպիտ, նուրբ, փոքր, ամբարտավան, ծույլ, ստորոտ, թույլ, գագաթ, սակավ, կոշտ, համեստ, ուժեղ, բազում, մեծ, ջանասեր, քնքուշ:

3. Տրված բառերից առանձնացրու հոմանշային ութ զույգ:

Ողորկ, դյութիչ, ստերջ, ծավի, դրվատել, խոսք, դժվար, ժողովել, հարթ, պատանի, խրթին, հավաքել, դատարկել, բիլ, վիթխարի, խոնավ, հմայիչ, պարպել, անպտուղ, գովաբանել, տա-

մուկ, հսկայական:

4. Տրված բառերից ընտրի՛ր հոմանիշ զույգերը:

Կարկաչ, պատգամ, անարատ, խումբ, ոսոխ, կռիվ, անաղարտ, դայլայլ, մարտ, պատվիրան, երամ, մաքուր, թշնամի, անբասիր:

5. Ընդգծված բառերի փոխարեն տեղադրի՛ր փակագծերում խառը տրված հոմանիշներից տեքստին համապատասխանող բառը:

Ասա՛ ինձ, խնդրեմ, հանուն հիվանդի դու կարո՞ղ ես քեզ զրկել ամեն ինչից: Կարո՞ղ ես քո **հանապազօրյա** հացի փոխարեն հիվանդի համար **դեղ** գնել, կարո՞ղ ես անքուն գիշերներ անցկացնել նրա **անկողնու** մոտ՝ **մոռանալով** քո **մերձավորներին**: Եվ, վերջապես, դու ընդունա՞ւկ ես մեկընդմիշտ ընդունել, որ բժշկի **աշխատանքը սոսկ** պարտականություն չէ, այլ **անհուն** սեր դեպի մարդը, համակ նվիրում և սրբազան գործ: Եթե ազնիվ ես, ասա՛ ինձ ճշմարտությունը:

(*անսահման*, *միայն*, *հարազատ*, *գործ*, *սպեղանի*, *սնար*, *չհիշել*, *ամենօրյա*)

6. Տրված հատվածի ընդգծված բառերը փոխարինի՛ր հոմանիշներով:

Անտառում ամպի **ծվեններ** կային,
Կապույտ մշուշներ կային անտառում,
Օրոր **էր ասում** աշունն անտառին,
Բայց դեռ անտառի **քունը** չէր տանում:

7. Տրված բառերից առանձնացրո՛ւ հականշային ութ զույգ:

Փութաջան, խորդուբորդ, գագաթ, ապօրինի, տգետ, ծույլ, օրինական, ուսյալ, երկչոտ, ջրարբի, անջրդի, ամպոտ, ստորոտ, համարձակ, լռել, արատավոր, խոսել, անխիտ, անբասիր, ողորկ, անամպ:

8. Յուրաքանչյուր շարքից առանձնացրո՛ւ հականշային նույնարմատ զույգ և յուրաքանչյուր բառով կազմի՛ր մեկական նախադասություն.

ա) մարդկային–տմարդի, տաք–ցուրտ, շուտ–ուշ,

բ) սառը–տաք, վախկոտ–անվախ,

գ) վախկոտ–արի, մաքուր–կեղտոտ,

դ) թեք–ուղիղ, մեծ–փոքր, հասուն–տհաս:

9. Յուրաքանչյուր շարքից առանձնացրո՛ւ հականշային տարարմատ զույգ և յուրաքանչյուր բառով կազմի՛ր մեկական նախադասություն.

ա) մոտ–կից, արագ–դանդաղ, տգետ–գիտուն,

բ) շոգ–տաք, մարդկային–տմարդի, ուրախ–տխուր,

գ) սառը–ցուրտ, վախկոտ–անվախ, երկար–կարճ,

դ) վճարովի–անվճար, վախկոտ–քաջ, մաքուր–վճիտ:

10. Տրված բառերից յուրաքանչյուրին ավելացրո՛ւ երկու հոմանիշ և մեկ հականիշ բառ:

Ականակիտ, հոծ, դաժան, քաջ, ջանասեր, վտիտ, պայծառ, մեղմ:

Նմուշ՝ ականակիտ – մաքուր, հստակ – պղտոր:

11. Ընդգծված բառերը փոխարինի՛ր հականիշներով:

Մի **իմաստունի** հարցրին.

– Ինչո՞ւ են **աղքատներն** ավելի **հյուրասեր** և **քիչ ժլատ**, քան **հարուստները**:

– Նայի՛ր պատուհանից, ի՞նչ ես տեսնում:

– Տեսնում եմ, թե ինչպես են **փոքրերը** խաղում բակում:

– Իսկ **հիմա** հայելու մե՛ջ նայիր: Այնտեղ ի՞նչ ես տեսնում:

– Ինքս ինձ:

– Տեսնո՞ւմ ես՝ և՛ պատուհանը, և՛ հայելին ապակուց են, բայց բավական է՝ մի **փոքր** արծաթ ավելացնես ապակուն և սկսում ես տեսնել միայն ինքդ քեզ:

12. Տրված բառերի հետ գործածի՛ր հատկանիշ արտահայտող երկուական բառ (մեկը՝ հականիշ):

Հյուր, երգ, աղոթք, հուշ, մթնշաղ, օձիք, բարդի, կածան, զեփյուռ, ամպ:

Նմուշ՝ դուրեկան երգ – ձանձրալի երգ:

13. Դուրս գրիր բանաստեղծության հականշային զույգերը:

Այնպես ես գալիս, այնպես ես գնում,
Ո՛վ դու արարող և ավերի՛չ,
Որ դժվար է մարդ գլխի ընկնում՝
Բերածդ ի՞նչ էր, տարածդ՝ ի՞նչ:
Գալիս ես որպես իրարանցում,
Անց ես կենում որպես երազ.
Կյանք իմ, դու ձրի ներկայացում,
Բայց ինչքան թանկ ես նստում վրաս:

14. Արտագրի՛ր, կետերի փոխարեն ավելացրո՛ւ հականիշներ:

1. Ժամանակ կա՝... ոսկի է, ...՝ արծաթ, ժամանակ էլ կա՝ ... ոսկի է, ...՝ արծաթ:

2. .... հետ քա՛ր քաշիր, ... հետ փլավ մի՛ ուտի:

3. ... գիտես, ... խոսիր:

4. Խոսքը՝ ..., ջուրը՝ ...:

5. Մազը՝..., խելքը՝ ...:

Նմուշ՝ Ժամանակ կա լռելը ոսկի է, խոսելը՝ արծաթ, ժամանակ կա՝ խոսելը ոսկի է, լռելը՝ արծաթ: